

ՄԻ ՕՏԱՐԱՄՈՒՏ ԿԵՐՊԱՐ «ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍԻ
ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ.
ԶՆՁԻԼ ՂՈԱՆ*

ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Բանալի բառեր՝ «Սասնա ծռեր» էպոս, Զնջիլ Ղոան, Սասունցի Դավիթ, «Քյոռօղլի» էպոս, Զինջիրքըռան, Առաքել Դավրիժեցի, Երեմիա Քյոմուրճյան, Գարեգին Հովսեփյան:

Նախաբան

Հայկական լեռնաշխարհում հայոց և թյուրքական վիպական ավանդույթների կրողները գտնվել են շարունակական շփումների մեջ, ինչի արդյունքում օտարամուտ (թյուրքական) կերպարներ են բացահայտվում «Սասնա ծռեր» էպոսում և հայկական կերպարներ, մասնավորապես, «Քյոռօղլի» էպոսում¹: Ակնհայտ է, որ ընթացել է երկկողմ փոխհարստացման գործընթաց և տեղի են ունեցել վիպական որոշ տարրերի փոխներթափանցումներ:

«Սասնա ծռեր» էպոսի որոշ պատումներում հանդես է գալիս հիմնականում անծանոթ և էպոսին ոչ բնորոշ «Զնջիլ Ղոան» («Զնճիլ խըռան», «Զընճիլ խըռան» կամ «Զանջիխան») անվամբ կերպար: Անվանումն օտարամուտ է, այն է՝ թուրքերեն Zincir Kiran, բառացի՝ «չղթա կոտորող»²:

* Ներկայացվել է 28. IX. 2024 թ., գրախոսվել է 30. IX. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

¹ Ռ ա մ ա գ յ ա ն. 2022, 110–116, Ռ ա մ ա գ յ ա ն. 2023, 150–171:

² 1530 թ. Վասպուրականում տեղի ունեցած բռնաճնշումների առթիվ հայ մատենագրության մեջ հիշատակվում է օսմանյան պաշտոնյա Ղազիդըռանը (տե՛ս Մանր ժամանակագրություններ. 1956, 232), ինչը մականուն է և թուրքերեն կարող է ստուգաբանվել տարբեր իմաստներով (թրք. Gazi՝ խիզախ, հաղթող, նաև՝ դատավոր և այլն): Օսմանյան պատմագրության մեջ նշված անձնավորությունը հայտնի է և հիշատակվում է ամբողջական անվամբ (Ali Bey Bin Gazi Kiran): Հակոբ Մնճուրին մի պատմվածքում վերջինիս անվան շուրջ ստեղծված գրույցների մասին նշում է. «Ինքը՝ Մղտեսի Գրիգորը ... կտր մորուքը ունկնդիրներուն ուղղած Ղատի-Ղոաններու, Տելի-Պաշներու արշավանքներեն կպատմեր» (Մ ն ձ ու ը ի. 1986, 93): Միևնույն մականվամբ XVII դ. պատմիչ Զաքարիա Քանաքեռցին հիշատակում է քանաքեռցի եպիսկոպոս Միքայելին, որը կարողացել էր պարսից Թահմազդուլի-խանի առջև բացահայտել մուսուլման դատավորի (Շրխ-Իսլամին Մահմետի) կաշառակերությունը արձակված վճռի անօրինականությունը և վերականգնել իր իրավունքը, ըստ այդմ, ստացել էր «Ղազիդըռան» մականունը (իմա՝ դատավորին կոտորող, հաղթող), «կործանող գդենպետ» (տե՛ս Զ ա ք ա ը ի ա Ք ա ն ա ք ե ռ ց ի. 1870, 74): Սույն պատմությունը մեջբերելով Հայր Ղևոնդ Ալիշանը մականունը թարգմանում է «Ղազիդըռան, իբր յաղթահարող դատաւորի» (Ա լ ի շ ա ն. 1890, 295):

Զնջիլ Ղուանի կերպարը «Սասնա ծռեր» էպոսի պատումնե-
րում

Սովորաբար այս կերպարը դասվում է էպոսի երկրորդական հերոսների շարքը, հիմնականում դրական կերպար է, Սասնա ծռերի զինակից-ազգականների շրջանակից: Մանուկ Աբեղյանը և Կարապետ Մելիք-Օհանջանյանը որոշակիորեն նույնացրել են Զնջիլ Ղուանի կերպարը ձնծղու Սուլթանի հետ՝ նշելով, որ զինակից-ազգակիցների անունները նրանց ֆիզիկական և հոգեկան հատկությունների արտահայտիչ ձևերն են, որոնք ընդգրկում են բնավորության ու վարքագծի բնորոշ որևէ հիմնական գիծ³: Միաժամանակ ներկայացվել է էպոսի հետաքրքրող պատումի հերոսների ճյուղագրությունը, որոնցում Զնջիլ Ղուանը կամ Զրնճիլ իրոհանը Մեծ Մհերի եղբայրն է, Սասունցի Դավթի հորեղբայրը⁴:

«Սասնու Դավթի» պատումում⁵, որը 1932 թ. Թալինի Աշնակ գյուղում 40-ամյա սասունցի վիպասաց Առաքել Սարուխանյանից գրառել է Մելիք-Օհանջանյանը, Զրնճիլ իրոհանը փաստացի ստանձնում է Զենով Օհանի դերը, «կերպարին յուրահատուկ երանգավորումով»⁶, ներկայացվում որպես Սասունցի Դավթի ավագ հորեղբայր: Նույն պատումում առկա է նաև նրան աղերսվող անանուն կերպար՝ «Զրնճիլ իրոհանի գնիզ»⁷:

Երբ Մըսրից Դավթին ճանապարհում են Սասուն, Մելիքին կնություն գնացած Դավթի մայրը (ըստ տվյալ տարբերակի) պատվիրում է.

– Տա՛վիթ ճան, քու հրոխարդանք Սասուն քաղաքն են...
– Էնոնց անուն, ըսավ,
Մեգին Ծինով Օհան,
Մեգին Զրնճիլ իրոհան,
Մեգին Մուխսի Զնջղուգ,
Մեգին լե Յուան Վեկո:
Էս չորս էլ քու հրոխարդանք են⁸:

Մանուկ Դավթի հասնում է Սասուն, պառկում ժամի (եկեղեցու) դռանը, և առաջինը նրան հանդիպում է հենց Զրնճիլ իրոհանը: Վերջինս տեսնում է անծանոթ տղային և «ազգակցական արյունը» ձգում է նրան⁹.

Զրնճիլ իրոհան էգավ ժամ.
Էգավ, գդղեն դեսավ,
Դղային քով գայնավ,
Զդղեն գը խոսացներ:

³ Սասնա ծռեր. 1951, 846:

⁴ Սասնա ծռեր. 1951, 888:

⁵ Սասնա ծռեր. 1944, 199–223:

⁶ Սասնա ծռեր. 1999, 40:

⁷ Սասնա ծռեր. 1999, 542:

⁸ Սասնա ծռեր. 1944, 208:

⁹ Սասնա ծռեր. 1999, 429:

Կեղացիք էգան, ըսին. – Զընճիլ իւրուան,
Ի՞նչ ես գայնե, դղայի հիդ գը խոսցնես.
Ողորմութուն գ'ուզը, ողորմութուն դուր ուրին, կնա՛:
– Դե՛, ըսալ, ըմ արուն հեռաց գղղայի վրեն՝¹⁰:

Հետևում է հարցուփորձը, ինչից պարզվում է Դավթի եղբորորդի լինելը.

– Իմ մամու բաղմելով՝ չորս հորոխակեր ունում ...
– Մե՛ձ հորոխակոր անուն, ըսալ,
Զընճիլ իւրուան ը ...
Զընճիլ իւրուան դեխեն թռալ,
Զդղան կրգեց, բաքեց.
– Վա՛յ, ըսալ, չեղնի՞՞ Տավիթն ես տու...
Ես լե քու մեծ հորոխակեր Զընճիլ իւրուան ըմ¹¹:

Այնուհետև Զընճիլ իւրուանը կանչում է մյուս երեք հորեղբայրներին, որին հետևում է ուրախության խնջույքը:

Հաջորդաբար ավագ հորեղբայրն ստանձնում է Դավթի խնամակալությունը, նրան են բողոքում սասուռնցի մեծամեծերը Դավթի մանկական չարածիւթյունների համար, հենց նա է Դավթին առժամանակ հորթարածի ու նախորդի պարտականությունները վստահում և ապա համոզվում դրա անհնարինություն մեջ¹²: Զընճիլ իւրուանն է հերկ անել սովորեցնում Դավթին, որն արձակում է եզներին և ինքը վարում գութանը: Ի վերջո, ավագ հորեղբոր մոտ տեսնելով Մըսրա հարկահաններին՝ Դավթը պատուհասում է նրանց, ապա պահանջում հոր ձին ու սպառազինությունը հետագա կռվի համար.

Ինչ արեց, չարեց Զընճիլ իւրուան,
Զգըրցալ արգելք էնեց Տավիթին:
Էլալ, գՄհերի ծին պերեց, թամքեց.
Զենք ու զրահներ պերեց, դվեց Տավիթին¹³:

Կռվից առաջ Մարիամ Աստվածածնի եկեղեցում մատաղ և աղոթք անելու համար խրատատու Պառավը խորհուրդ է տալիս Դավթին դիմել ավագ հորեղբորը.

Կնա քու հրոխակոր Զընճիլ իւրուանի մող.
Կնա, ուզը՝ քառսուն անձին քալե՛ճ,
Կնա, ուզը՝ քառսուն հողկա մոմեր...
Ըսա՛ Մայր Ասդվաճաճին զիս մուրաղ իղա՛ ...¹⁴

¹⁰ Սասնա ծռեր. 1944, 209:

¹¹ Սասնա ծռեր. 1944, 209:

¹² Սասնա ծռեր. 1944, 209–213:

¹³ Սասնա ծռեր. 1944, 217:

¹⁴ Սասնա ծռեր. 1944, 218:

Հաջորդաբար Մելիքը խաբեություն մը շղթայում է Դավթին, Զրնճիլ իրուանը երազ է տեսնում և կանխագգում Դավթին սպառնացող վտանգը, պատմում կնոջը, որը, սակայն, նրան չի հավատում: Դրանից հետո ավագ հորեղբայրը դիմում է Ձենով Օհանին, որպեսզի գա, բղավի և Դավթին հիշեցնի Մարիամ Աստվածածնի անունը, ինչից հետո շղթայված Դավթին ազատվում է կապանքներից, մենամարտում և հաղթում հակառակորդին¹⁵:

Ակնհայտ է, որ նշված պատումում Զրնճիլ իրուանը բացառիկ կենտրոնական դերակատարություն ունի, ինչը, ընդհանրապես, էպոսի այլ տարբերակներով հայտնի չէ և բնորոշ չէ ընդհանուր բովանդակությանը: Սարգիս Հարությունյանի գնահատմամբ Առաքել Սարուխանյանի պատումն իր հետ բերում է հավելյալ կերպար, որին կապակցվում են հենց տվյալ պատումում առկա մի քանի եզակի մոտիվներ, մոտիվային շեղումներ¹⁶: Միևնույն պատումի առնչությամբ Հայկ Համբարձումյանը եզրակացնում է, որ Զրնճիլ իրուանը բավական ակտիվ մտնում է գործողությունների մեջ, և, ըստ էության, նրա միջոցով են իրացվում Ձենով Օհանի գործառույթները մինչև Դավթին հորից դուրս բերելը. «Առաջին հայացքից կերպարի ներմուծումը շփոթության արդյունք է, մանավանդ որ նա (Զրնճիլ իրուանը – Ս. Ռ.) չունի նոր գործառույթներ, սակայն հորեղբայրների թվարկումից ակնհայտ է, որ վիպասացը գիտե Ձենով Հովանի մասին, սակայն նրա մասնակցությամբ մոտիվներ չեն օգտագործվում»¹⁷:

Զրնճիլ իրուանի կերպարի գործառույթային անվանական տվյալները հաշվի առնելով ակնկալելի էր դրանց բացատրության որևէ հիշատակություն, ինչպես, օրինակ, «շղթա կոտրող» դարբին լինելու պարագան (դարբնի հանգամանքը որոշ պատումներում բնորոշ է Քեռի Թորոսի կերպարին): Սակայն նման որևէ տեղեկություն առանց այդ էլ սակավադեպ նշվող կերպարի առնչությամբ չի հանդիպում:

Էպոսի միայն մի պատումում միևնույն կերպարը հանդես է գալիս որպես Դավթի հակառակորդ և մենամարտում նրա հետ, այլ պատումներում հիշատակվող Դավթի մեկ այլ հակառակորդի կամ հակառակորդների հետ միաձուլված ընդհանուր անվամբ՝ Օղան-Տողան-Ջանջլիսուն: Տվյալ պատումն Ապարանի Ղազանֆար (Արագած) գյուղում¹⁸ գրառած Գարեգին Հովսեփյանի 1892 թ. ծանուցմամբ՝ «Խանդուկ ինքնունը Դավթին ճանապարհ դնելիս, պատուիրում է Քարայ դաշտը»¹⁹ չգնալ կռուելու, այլ Ձիմանին, որովհետև Օղան-Տողան-Ջանջլիսունը (ըստ վարիանտի), որի հետ պիտի կռուէր Դավթը, սէհրական²⁰ է, երկնքի երեսով գալիս, հարուածում է հակառակորդին և գետին գլու-

¹⁵ Սասնա ծռեր. 1944, 220–221:

¹⁶ Սասնա ծռեր. 1999, 40: Մանրամասն տե՛ս մոտիվների համացուլցում (Սասնա ծռեր. 1999, 427, 429, 436–437):

¹⁷ Համբարձումյան. 2018, 214:

¹⁸ Պատումը չի հրատարակվել և անհայտ է: Գ. Հովսեփյանն այն նշում է որպես «Բ վարիանտ» (Սասնայ ծռեր. 1892, Ը):

¹⁹ Քարադաշտ անվամբ հայաբնակ գյուղ է եղել Վանի նահանգի Գավաշի գավառակում, որը հնում կոչվել է Մանակերտ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 2001, 312):

²⁰ Փոխառություն արաբերենից և պարսկերենից՝ sehar կամ sehir՝ «կախարդություն», «դյուլթություն», նաև sehir՝ «դյուլթական», «կախարդական», «դյուլթ», «կախարդ» (Սասնա ծռեր. 1977, 681):

րում: Դաւիթը չի կատարում նորա պատուէրը և վտանգից միայն Ձենով-Յովանի ազդարարութեամբ է ազատւում, յիշելով Աստուծոյ անունը»²¹: Փաստորեն, այս դեպքում Օղան-Տողանի²² կերպարի հետ միաձուլված Ջանջլի-խռանն ունի դյուլթական և հմայական հատկութիւններ, օղազնաց է, Դավիթի հակառակորդների ճամբարից:

Բնականաբար, վերոհիշյալ իրողութիւնների հաշվառմամբ Զնջիլ Ղռանի կերպարը «Սասնա ծռերի» համահավաք բնագործ է ընդգրկվել: Ջնայած բազմազան կերպարների առկայութեան՝ այն նմանապես չի ընդգրկվել բանահավաք Տիգրան Ջիթունու «Սասունականում»²³, որը, ընդհանրապես, աչքի է ընկնում բազմազան կերպարների առատութեամբ:

Հիմք ընդունելով Ա. Սարուխանյանի ասացած պատումը՝ Զնջիլ Ղռանի կերպարն ընդգրկվել է 1993 թ. կազմված «Սասունցի Դավիթ» համահավաք տարբերակում, էպոսի ավագ սերնդի ազգակիցների խմբում:

Սանասարին Աստված էտու լաճ մի,
Անուն դրին Վերգո:
Քանի մի տարի անցալ,
Սանասարին էրկու տղա էլ էղալ,
Մեկի անուն դրին Ձենով Հովան,
Պատիկի անուն՝ Մհեր:
Ուրիշ տղեկներ էլ էղան՝
Ճնճղափոքրիկ, Խոր Գուսան, Զնջիլ Ղռան²⁴:

Վերջինս կրկին նշվում է Սանասարի մահից հետո մնացած ավագների թվում:

Մնացին քեռի Թորոս, Դեղձուն,
Ճնճղափոքրիկ, Խոր Գուսան, Զնջիլ Ղռան,
Վերգո, Ձենով Հովան, Մհեր:
Էկալ Մհերի ժամանակ²⁵:

Զնջիլ Ղռանն անվանապես հիշատակվում է Դավիթին օգնութեան հասնող բարեկամների հետ նույն շարքում, որոնց ժողովում է Քեռի Թորոսը:

²¹ Սասնայ ծռեր. 1892, 46: Հմմտ. Սասնա ծռեր. 1944, 86 (տպագրված է մասնակի պակասութիւններով):

²² Օղան-Տողանը (Դողան) նշվում է նաև որպես առանձին հակառակորդ թագավորների անուններ՝ Օղան ու Տողան: Ընդունված է Օղանը կապակցել Աղվանքի հետ (աղուան-աւղան), իսկ Տողանը՝ տօղան-տաւղան նախաձևին (տե՛ս Պ ե տ ր ո ս յ ա ն. 1986, 195–200): Միայն քավառցի ասացող Հակոբ Նրգեյանի ասացած տարբերակով Օղան Դողանը նշվում է Սասնա ավագ հերոսների (Ձենով Օհան, Ճնճղու Սուլթան և այլն) շարքում, ինչն արդեն ակնհայտ շեղում-չփոթ է (Սասնա ծռեր. 1951, 27):

²³ Ջ ի թ ու ն ի. 1942:

²⁴ Սասունցի Դավիթ. 1993, 100:

²⁵ Սասունցի Դավիթ. 1993, 100:

Քեռի Թորոս կը լսի էդ ձեն, կասի.
 – Վայ մեր գլխին, Դավիթ սպանին:
 Ձենով Հովան, Ձնջիլ Դուան,
 Խորան Գուսան, Ճնճղափորիկ,
 Ցուան Վերգո ժողվեց իրար.
 «Երթանք, – ասաց, – Հասնենք Դավթին»²⁶:

«Ձնջիլ Կուան» անվամբ հերոսի կերպար է հանդիպում Վասպուրականի բանահյուսության մեջ, առասպելաբանական տարրերով լեցուն «Ասլան օղլին» հեքիաթում, ընդ որում հերոսն այդպես է անվանակոչվում «զնջիլ կտուտող» լինելու պատճառով²⁷:

Վասպուրականի բանահյուսության մեջ հանդիպում է նաև նույնահունչ «Ձանջիլ Կուան» անվամբ մարդկային լեզվին տիրապետող հավատարիմ շան կերպարը. մասնավորապես՝ հայտնի են երկու նույնանուն հեքիաթ²⁸: Ընդ որում՝ երկրորդ դեպքում առկա է հավատարիմ շան կովի դրվագը դեերի հետ²⁹: Տվյալ պարագային խոսքը տարբեր կերպարների մասին է, զուտ անվանական համընկմամբ: Շղթա կրծող շան կերպարը, բնականաբար, աղերսվում է Մովսես Խորենացուց ավանդված Արտավազդի գրույցին, որում քարանձավում բանտված արքայի շները շղթաները կրծելով՝ փորձում են ազատել իրենց տիրոջը³⁰:

Զինջիր-Քըռանի կերպարը «Քյոռօղլի» էպոսում

Միևնույն կերպարը «Զինջիր-Քըռան» (Zincir-Kiran) անվամբ առկա է «Քյոռօղլի» («Քյոռօղլու») էպոսի թուրքական տարբերակներում: Մասնավորապես, Ուրֆայի շրջանում տարածված պատմամենքում Զինջիր-Քըռանը Քյոռօղլու «դելիների» (իմա՝ ծուրի, խենթերի)³¹ խմբից է: Նրա դերակատար-

²⁶ Սասունցի Դավիթ. 1993, 345:

²⁷ Հայ ժողովրդական հեքիաթներ. 1998, 300–306 («Ասլան օղլին»):

²⁸ Հայ ժողովրդական հեքիաթներ. 1999, 128–142, Հայ ժողովրդական հեքիաթներ. 1998, 128–135:

²⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ. 1998, 128–135:

³⁰ Զինջիրքըռան կամ Զինջիրքիռան անվամբ գյուղ է հայտնի Վանի նահանգում (ներկայիս Սարայ շրջանում): Հիշատակվել է նաև Քուրջևիք, Քուրջիվիք և Գուրջիվիք անուններով:

³¹ Սասնա ծուրի և «Քյոռօղլու» ծուրի (դալիների) ընդհանրությունը նկատվել է Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից, որոնց ձևակերպմամբ, ծուռը թշնամիներից չի վախենում, իբրև անվեհեր կտրիճ՝ կռվում է նրանց դեմ, և, ընդհանրապես, թշնամիներն իրենք են սարսափում նրանից, ընդ որում՝ հերոսներին տրվող այդ մակդիրը հին է և ընդհանուր: Որպես օրինակ են բերվում Քյոռօղլու «դալի»-ծուրը (Սասնա ծուր. 1951, 846): 1939 թ. հրապարակված «Մի ֆանտազիա «Սասունցի Դավիթ» առթիվ» հոդվածում վերահիշյալը դիտարկվել է նաև Դերենիկ Դեմիրճյանի կողմից. «Սասնա «ծուրը» քաջեր են, «գժեր», «դալիներ» (Դեմիրճյան. 1985, 183): Այլևի վաղ բանահավաք Սարգիս Հայկունին ևս նշել է երկու բառերի նույնիմաստ լինելն իր գրառած «Դալու Համզա» հեքիաթի առնչությամբ. «Դալու (դալի – Ս. Ռ.) կը նշանակէ ճիշդ մեր Դաւիթ եւ Մհերի մէջ գործածուած ծուռ բառն, որի թէեւ իսկական նշանակութիւնն է յիմար, սակայն այստեղ կը

րությունն ընդգծվում է հայ վաճառականի կամ Զոռ Բեզիրգանի (Zor Bezirgân) սպանության և նրա քարավանի կողոպտման դրվագում³², ինչը բնորոշ է «Քյոռոլլի» էպոսի արևմտյան ու արևելյան խմբերի տարբերակների մեծ մասին³³:

Էպոսի հայտնի հետազոտողներից Փերթև Նախլի Բորաթավը, ըստ ամենայնի, հիմք ընդունելով զուտ անվանական-գործառութային նմանությունը՝ հավանական է նկատել Զինջիր-Քրուանի նույնացումը Քյոռոլլու մեկ այլ զինակից հանդես եկող Դեմիրչիօլլուի (Դեմիրչիօլլու, թրք.՝ «դարբնի որդի») հետ³⁴, ինչը, սակայն, հիմնովին բացառվում է տիպաբանական վերլուծությամբ: Նախ, Ուրֆայի տարբերակում Զինջիր-Քրուանի հետ Քյոռոլլու խմբում ի թիվս այլ դավիների (Դադ-Դեիրեն, Հոյլու Բեյ, Նալբանթ Բաշը, Սելամ-Ալմազ, Կաբրե-Սըղմազ, Էջելի-Անան, Դելլաք Հասան), որոնց մեծ մասը բնորոշ է հենց տվյալ տարբերակին, նշվում է նաև Դեմիրչիօլլուն³⁵, ըստ այդմ՝ որևէ նույնացում ինքնաբերաբար բացառվում է: Բացի այդ, Դեմիրչիօլլուի կերպարը մեծամասամբ նույնանում է Դելի Հասանի հետ (Դեմիրչիօլլու Դելի Հասան), ինչն առկա է Ուրմիայի հայկական տարբերակում ևս³⁶:

Նմանապես Զինջիրքրուանը Քյոռոլլու հազարապետների շարքում է նշվում Մարաշի շրջանում տարածված պատումներում, վերոհիշյալ «դելինների» հետ: Ընդ որում, առկա է նաև համանման «Դեմիր Քրուան», այն է՝ «երկաթ կոտրող» մականվամբ Քյոռոլլու մեկ այլ զինակցի սակավադեպ նշվող կերպար: Ընդհանրապես, Զինջիր-Քրուանի կերպարը խիստ սակավադեպ է թուրքական պատումներում, այն որոշակիորեն տեղային բնույթ է կրում: Ամեն դեպքում թուրքական պատումներում նշվող 75 «դելիների» թվում Զինջիրքրուանի անունը կայուն տեղ ունի³⁷: Միաժամանակ Զինջիրքրուանի կերպարը հանդիպում է ինչպես XX դ., այնպես էլ նոր շրջանի աշուղական մշակումներում (օրինակ՝ կարսեցի աշուղ Մուրաթ Չոբանօլլուի մշակած Քյոռոլլու զինակից Գզրիօլլի Մուստաֆայի մասին տարբերակում)³⁸:

Զինջիրքրուանի կերպարն անձանոթ է մնացել նաև արևմտյան խմբի մյուս տարբերակներին, իսկ արևելյան խմբի տարբերակներին, ընդհանրապես, բնորոշ չէ:

Նմանապես հայկական միակ հրատարակված Ուրմիայի տարբերակում հիշատակվող Քյոռոլլու բազմամարդ խմբի կազմում Զրնջիլ Ղուանը չի նշվում: Սակայն հաշվի առնելով «Սասնա ծռերի» որոշ պատումներում նման կերպարի առկայությունը, միևնույնը սպասելի է, մանավանդ, Արևմտյան Հայաստա-

նշանակէ քաջ, կտրիճ, համարձակ, աներկիւղ եւլն» (Էմինեան ազգագրական ժողովածու. 1904, 98):

³² Boratav. 2016, 47, 103, 334–336.

³³ Ռ ա մ ա զ յ ա ն. 2018ա, 205–219:

³⁴ Boratav. 2016, 103.

³⁵ Boratav. 2016, 47, 334–335, 341.

³⁶ Քյոռ-Օղլի. 1941, 84:

³⁷ Kaya. 2016, 37.

³⁸ Չոբանձ կերպարի սահմանափակ տարածվածությունը թուրքական տարբերակներում 1968 թ. Թուրքիայում նկարահանված «Քյոռոլլու» կինոնկարում այն առկա է (Zincir Kiran):

նույն կամ արևմտահայ ասացողներից գրառված «Քյոռօղլու» անտիպ տարբերակներում, որոնք դեռևս ամբողջությամբ չեն ուսումնասիրվել (մինչ այժմ մեզ հայտնի դարձած անտիպ նյութերից նման կերպար հայտնի չէ):

Զինջիրքըռանի մասին հիշատակություններն օսմանյան պատմագրության մեջ

Ինչպես հայտնի է, «Քյոռօղլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներում հիմնավորապես պահպանվել են պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, այն է՝ Փոքր Ասիայում XVI–XVII դդ. տեղի ունեցած ջալալիների (ջելալիների) ապստամբությունները, որոնք շուրջ 20 տարի ցնցել են Օսմանյան կայսրությունը: Քյոռօղլին ինքն ունեցել է իր պատմական նախատիպը՝ հանձին տվյալ ժամանակահատվածում կայսրության ասիական մասի հյուսիս-արևմուտքում, մասնավորապես՝ Բոլու և Գերեզե չրջաններում գործած համանուն ավազակապետի, որի հրոսակային գործողությունների մասին տեղեկություններ են պահպանվել 1579–1581 թթ., 1588 թ. և 1593–1595 թթ. օսմանյան պետական արխիվների փաստաթղթերում, ինչպես նաև XVII–XVIII դդ. հայ մատենագրության էջերում: Առկա են նաև հիշատակություններ էպոսում որպես Քյոռօղլու զինակիցներ գործող բազմաթիվ կերպարների պատմական նախատիպերի մասին, որոնք ևս ջալալիների ղեկավարներից են եղել: Քննարկվող հարցի պարագային հանձին վիպական Քյոռօղլու զինակից Զինջիր-Քըռանի՝ ջալալիների առաջնորդների թվից հայտնի է Զինջիրքըռան Ալի փաշան, որը ջալալիական ապստամբությանը հարելուց զատ գրադեցրել է պետական մի շարք պաշտոններ:

Հարկ է նշել, որ տվյալ մականունը հիշատակվում է դեռևս XIV դ., մասնավորապես՝ հայտնի է մամուլք առաջնորդներից Զինջիրքըռան Մեհմեդը (Մուբարիզ աղ-Դին Մեհմեդ): Վերջինս 1373 թ. Կիլիկիայի հայոց թագավորությունից գրավել է Ատտալիա (Անթալիա) նավահանգիստը՝ ըստ ավանդության կոտորելով արգելափակող շղթաները, ինչից էլ ստացել է համապատասխան մականունը³⁹: Ընդամենը, Զինջիրքըռանների տոհմը կամ տվյալ ազգանվամբ անձինք (Zincir-Kıran կամ Zincirkıran) մինչ այժմ էլ հայտնի են Թուրքիայում⁴⁰:

Օսմանյան պատմագրության տվյալներով, Զինջիրքըռան Ալի փաշան 1597 (1006) թ. եղել է Ռաքքայի բեյլերբեյ, այն է՝ քաղաքական և զինվորական կառավարիչ, այնուհետև՝ Սրվաաի (Սեբաստիա) վալի (նահանգապետ): 1603 թ. մայիսին օսմանա-իրանական պատերազմի ժամանակ վերջինս եղել է Թալ-րիդի բեյլերբեյ, արշավել Շահ Աբասի կողմն անցած և Քարնըյարըքի ամրոցում ապաստանած Գազի բեյի դեմ, ինչն անհաջող ելք է ունեցել: 1603 թ. սեպտեմբերի 26-ին իրանցիները պաշարել են Թալրիդը, որտեղ փոքրաքանակ կայազորի հրամանատարությունը Զինջիրքըռանը հանձնել էր սեփական որդուն: Ջանալով փրկել իրադրությունը՝ սեպտեմբերի 28-ին Զինջիրքըռանն այլ

³⁹ Հայտնի է 1377 թ. Անթալիայում սելջուկյան ոճով կառուցված Զինջիրքըռանի դամբարանը (Zincirkıran Türbesi) Յիվլի մզկիթի համալիրի մեջ:

⁴⁰ Թերևս, ամենահայտնի անձնավորությունը Ֆուաթ Զինջիրքըռանն է (1897–1958 թթ.)՝ Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր, ճարտարագետ:

զորքերի հետ անցել է հարձակման, սակայն հրամանատարներից Դեմիրջի-օղլուի⁴¹ ջախջախումից հետո օսմանցիները նահանջել և փախուստի են դիմել, իսկ 6 փաշաներ, այդ թվում՝ Զինջիրքըռանը, գերեվարվել են: Առժամանակ անց Զինջիրքըռանն ազատվել է գերությունից և ժամանակավորապես եղել Վանի նահանգապետ: 1606 թ. մոտ 1 տարի (կամ 5 ամիս) եղել է Դիարբեքիրի նահանգապետ և մահացել: Գերեզմանը գտնվում է Դիարբեքիրի Սուր շրջա-նում՝ Նասուհ փաշայի մզկիթի մոտ:

Հիշատակություններ հայ պատմագրության մեջ

Զինջիրքըռան Ալի փաշայի մասին առկա են հիշատակություններ նաև XVII դ. հայ պատմագրության էջերում: Մասնավորապես, Առաքել վարդապետ Դավրիժեցին «Գիրք պատմութեանց» երկի Ը գլխում («Յաղագս առման քաղաքացն Գանձայու եւ Շամախու») պատմելով իրանցիների կողմից 1606 թ. Գանձակի պաշարման և օսմանցիների հուսահատական դրության մասին նշում է. «Ի վերջոյ ամենայն պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն Օսմանցւոց հայէին շուրջ զինքեամբ, զի ոչ յուստեքէ գոյր նոցա օգնական ոչ յիւրեանց շրջակայ քաղաքացն, նաև ոչ ի դրանէ թագաւորին իւրեանց. զի Զալալիք բազում կային ի մէջ երկրին Օսմանցւոց՝ զորոց զանուանսն յանցեալ ճառիդ յիշեցաք, և նոքա այնու էին պատաղեալք: Այլ և փաշայն Գանձայու անկեալ էր ի պատերազմին՝ որոյ անունն էր Զընջիլղւան Ալի փաշայ»⁴²: Հատկանշական է, որ Դավրիժեցին օսմանցիների թուլացման պատճառ է նշում ջալալիներին, որոնց ավելի վաղ հականե-հանվանե անդրադառնում է իր երկի է գլխում նրանց թվում, սակայն, չհիշատակելով Զինջիրքըռան Ալի փաշային: Ավելին, տվյալ դեպքում Դավրիժեցին վերջինիս հիշատակում է որպես «փաշայն Գանձայու»⁴³, ինչն արդեն հակասության մեջ է մտնում օսմանյան պատմագրության հաղորդումների հետ: Մասնավորապես, XVII դ. պատմիչ Իբրահիմ Փեչեկին Գյանձայում (Գանձակ) հիշատակում է Մուհամմեդ փաշային, որը յոթամսյա պաշարումից հետո քաղաքը հանձնում է Շահ Աբասին⁴⁴: Դավրիժեցու հաղորդման հաշվառմամբ ժամանակին ենթադրվել է, թե Մուհամմեդ փաշան տվյալ պաշտոնում փոխարինել է Զինջիրքըռանին նրա մահից հետո⁴⁵, ինչը, սակայն, չի հաստատվում: Ըստ այդմ՝ ընդհանրապես, ճիշտ չէ նշել «Գանձայի Զընջիլղւան Ալի-փաշայի սպանության» մասին⁴⁶: Հիմք ընդունելով միայն Դավրիժեցու սույն հաղորդումը: Նմանապես սխալ է որևէ մեկին «Գյանձայի բեյլերբեյ» նշելը, քանի որ նման պաշտոն իրականում գոյություն չի ունեցել:

Ամեն դեպքում պատահական չէ Դավրիժեցու երկի տվյալ հատվածում Զինջիրքըռանի հիշատակությունը ջալալիներին վերաբերող հատվածից հետո:

⁴¹ Բացառված չէ, որ խոսքն էպոսի համանուն հերոսի պատմական նախատիպի մասին է, ինչի պարագային Փ. Ն. Բորաթալի արած նույնացումը կրկին հերքվում է:

⁴² Դ ա լ ը ի ժ ե ց ի. 1990, 113: Դավրիժեցու այլ ձեռագրերում առկա է անվանական գրության «Զնջիլղւան» ձևը (Դ ա լ ը ի ժ ե ց ի. 1990, 113):

⁴³ Դ ա լ ը ի ժ ե ց ի. 1990, 113:

⁴⁴ Ս ա ֆ Ր ա ս տ յ ա ն. 1961, 55:

⁴⁵ Դ ա լ ը ի ժ ե ց ի. 1990, 508:

⁴⁶ Դ ա ն ե ղ յ ա ն. 1978, 113:

Դավրիժեցին ինքը, ի վերջո, կարող էր տեղյակ չլինել նրա գերեվարման փաստից:

Ի տարբերություն Դավրիժեցու՝ Զինջիրբերդյանին ջալալի առաջնորդների շարքում հայ մատենագիրներից հիշատակում է XVII դ. նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Երեմիա Քյոմուրճյանը (Երեմիա Կոնստանդնուպոլսեցի)՝ իր «Պատմութիւն համառօտ Դժ տարւոյ օսմանցոց թագաւորացն» չափածո պատմական երկում, որը գրվել է 1675–1678 թթ.: Ընդհանրապես, հայ մատենագրության մեջ Քյոմուրճյանն ավելի մեծ թվով ջալալի առաջնորդների է հականե-հանվանե հիշատակում (60 հոգու, այդ թվում՝ Քյոռօղլուն), քան որևէ մեկ այլ հեղինակ:

Զգործսն զարարս և զգօրութիւնս
և զսէրտարացն անաջողեալ
Զայս համառօտ իբր անցուցի,
միայն զանուանսն ըստորազրեալ:
Յորոց բազմաց տեղեկացաք
միայն զանուանսն ի շար եղեալ,
Զչարքըն չարեօք յիշատակեմք,
որք նախնեաց մեր զչարիս ածեալ⁴⁷:

Հիմնականում միայն անվանապես հիշատակելով հայտնի ջալալի առաջնորդներին՝ Քյոմուրճյանը նաև համապատասխան մակդիրներով է բնութագրում նրանց:

Ղարա Եազըճին մըլխացաւ,
եղբայր նորա Հասան սլացեալ:
Զէնճիր գըռան Ալի փաշայն,
քան զանճոռնիսըն ցասուցեալ...⁴⁸

Փաստորեն, Քյոմուրճյանը հստակ նշում է Զինջիրբերդյանի՝ ջալալի առաջնորդ լինելը. ավելին, նրան հիշատակում է ջալալիական առաջին իսկ ելույթների առաջնորդներ Կարա Յազըջիից և նրա եղբայր Հասանից (Դելի Հասան) անմիջապես հետո՝ այս կերպ ընդգծելով նրա առաջնակարգ դիրքն ապստամբ առաջնորդների շարքում⁴⁹:

⁴⁷ Ք ե օ մ ի ւ ը ճ ե ա ն. 1982, 167 (տողեր 123–126):

⁴⁸ Ք ե օ մ ի ւ ը ճ ե ա ն. 1982, 168 (տողեր 130–131):

⁴⁹ 1915 թ. շատախցի Մանուշակ Զաղոյանից բանահավաք Շահեն Կոժիկյանի գրառած «Սասնա ծռերի» պատումում, բացի Կուզ Բահդինից (Կոզբադին), առկա է Վրհաբի խոլամ (ծառա, իմա՝ հարկահան) Հասան Բեկի կերպարը, որն ընդամենը երկու տեղ է հիշատակվում, Հասան Բակ կամ Հրսեն Բակ անուններով (Սասնա ծռեր. 1936, 706, 712): Մոկացի Հովանից Գ. Հովսեփյանի գրառած և 1892 թ. հրատարակված պատումում ծանուցման կարգով երկու անգամ նշվում է, որ «Բ վարիանտով Կուզբադինի տեղ Քեոսէն է գալիս» կամ «Ա վարիանտով այժմ գալիս է Քեոսէն» (Սասնայ ծռեր. 1892, 99–100, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 184–185): Երկու դեպքում էլ խոսքը Մրսրա հարկահանների մասին է, որոնցից մեկը կրում է «Քյոսե» (թրք.՝ «անբեղ-անմորուք»)

Այսպիսով, ակնհայտ է, որ «Սասնա ծռեր» էպոսում Զնժիլ Ղուանը միանշանակ օտարամուտ կերպար է՝ ներմուծված «Քյոռօղլի» էպոսի թուրքական տարբերակից: Նման փոխանցման հնարավոր խողովակ, առաջին հերթին, կարող են լինել հենց ասացողները: 1888 թ. Սասունի Գոմրդեր գյուղում ծնված Առաքել Խաչատուրի Սարուխանյանի մասին Մելիք-Օհանջանյանի ծանուցումից հայտնի է, որ նա վաղ հասակում որբացել է և մեծացել թուրքական միջավայրում (պահել է թուրք աղան մինչև հասունանալը)⁵⁰: Ըստ այդմ, «Քյոռօղլու» պատումները նրան կարող էին ծանոթ լինել հենց տվյալ ժամանակահատվածից: Միևնույն ժամանակամասը նշվում է, որ «Սասնա ծռերի» խնդրո առարկա պատումն ասացողը լսել է ինչպես իր ծննդավայրում, այնպես էլ՝ Արևելյան Հայաստանում հաստատված սասունցիներից⁵¹:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է արձանագրել.

– Զնժիլ Ղուանի (Զրնճիլ Խրոան) կերպարի պարագային առկա է Սասնա պատումներին հատուկ շեղում-չփոթ: Տվյալ կերպարը, ընդհանրապես, բնորոշ չէ հայկական էպոսին:

– «Քյոռօղլի» էպոսի թուրքական պատումներում գլխավոր հերոսի զինակիցների խմբում առկա է միևնույն անվամբ Զինժիր-Քրոանի (Զինժիրքրոան) կերպարը:

– Հայտնի է Զինժիր-Քրոանի պատմական նախատիպը՝ հանձին ջալալիների առաջնորդներից ու օսմանյան ռազմաքաղաքական գործիչներից Զինժիրքրոան Ալի փաշայի, որի մասին հաղորդումներ կան օսմանյան և հայկական պատմագրության մեջ:

– «Սասնա ծռերին» անծանոթ և ոչ բնորոշ այս կերպարը ներմուծվել է «Քյոռօղլի» էպոսից, մի զարգացում, որն իրապես բնորոշ է բանահյուսության:

մականունը, այլ ոչ թե «Քոսեն», ինչպես սխալմամբ նշված է հատուկ անունների ցանկում (Սասնա ծռեր. 1951, 958): Ապարանի գյուղերում Գ. Հովսեփյանի գրառած տվյալ պատումները, ինչպես նշվեց, չեն հրատարակվել և անհայտ են: «Քյոռօղլի» էպոսի արևմտյան ու արևելյան խմբերի տարբերակներում առկա է գլխավոր հերոսի զինակից Քյոսե Սաֆարի (Սաֆար-Քոսե) կերպարը, որն ունի իր պատմական նախատիպը՝ հանձին ջալալիների ապստամբության ազդեցիկ առաջնորդներից Քյոսե Սեֆեր փաշայի (հիշատակվում է XVII–XVIII դդ. օսմանյան և հայ մատենագրության մեջ): Կերպարը դասվում է թուրք վիպական ավանդության մեջ տարածված խորամանկ և ճարպիկ «քոսա»-«քոսենների» շարքը (ինչպես, օրինակ, թուրքմենական հեքիաթների հերոս Ալիար-Քոսեն): Ըստ էության, «Սասնա ծռերի» պատումների Հասան Բեկի ու Քյոսեի դեպքում ևս գործ ունենք օտարամուտ կերպարների հետ, որոնց նախատիպերը, ինչպես Զնժիլ Ղուանի դեպքում, ջալալիների հայտնի առաջնորդներից են, հայտնի «Քյոռօղլի» էպոսից:

⁵⁰ Սասնա ծռեր. 1944, 201:

⁵¹ Նշվում է նաև, որ պատումը լսել է Թալինի Գյոզլու (ներկայիս Ակունք) գյուղում Ղազար անվամբ մի գյուղացուց (Սասունի պարագային չի նշվում, թե ումից), ով գիտեր միայն այս ճյուղը, ինչպես նաև՝ այլ ստեղծագործություններ (Սասնա ծռեր. 1944, 201):

– Ուշադրության է արժանի որոշ դեպքերում «Սասնա ծռերի» և «Քյոո-օղլու» հայ ասացողների ծագման հանգամանքը միևնույն տարածաշրջանից, ընդ որում, ոմանք հավասարապես տիրապետել են երկու ստեղծագործություններին⁵²։ Տվյալ հանգամանքն իր հերթին որոշակիորեն կարող է բացատրել առկա ակնհայտ վիպական համանմանությունները և որոշ կերպարների ընդհանրությունը։

Սամվել Ռամազյան – Բ. Գ. Թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գլխավոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս։ Գիտական հետաքրքրությունները՝ հայ-թյուրքական բանահյուսական առնչություններ, հայ-հունական առնչությունների պատմություն։ Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 40 հոդվածի։

ORCID:0009-0007-1782-4777. sramaz@mail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. 1890, Այրարատ. Բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, 590 էջ։

Առաքել Ղալիթեցի. 1990, Գիրք պատմութեանց, աշխատ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 596 էջ։

Ղանեղյան Լ. 1978, Առաքել Ղալիթեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ։

Ղեմիրձյան Ղ. 1985, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 431 էջ։

Երեմիա Քեօմիրձեան. 1982, Պատմութիւն համառօտ ՂՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատ.՝ Ժ. Ավետիսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 416 էջ։

Ջաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն. 1870, հ. Ա, Վաղարշապատ, Ի տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 87 էջ։

Էմինեան ազգագրական ժողովածու. 1904, հ. Ե, հաւաքեց Ս. Հայկունի, Մոսկուա-Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, VIII + 316 էջ։

Համբարձումյան Հ. 2018, Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ։ խմբ.՝ Ս. Հարությունյան, Երևան, ԵՊՀ հրատ., 320 էջ։

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1999, հ. 14 (Վան-Վասպուրական), կազմ.՝ Ա. Ղազիյան, խմբ.՝ Ս. Գևորգյան, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 591 էջ։

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1998, հ. 15 (Վան-Վասպուրական), կազմ.՝ Վ. Սվազյան, խմբ.՝ Ս. Գևորգյան, Երևան, «Ամրոց», 512 էջ։

Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. 2001, հ. 5, կազմ.՝ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Երևան, ԵՊՀ հրատ., 916 էջ։

⁵² Տվյալ երևույթի արտահայտությունը տեղ է գտել Հմայակ Սիրասի վեպում. «Աշուղը վերջերս էր եկել Արևմտյան Հայաստանից։ Մի քանի երգ երգեց «Սասնա ծռերից», Քյոո օղլու գովքն արեց ...» (Ս ի Ր ա ս. 1974, 19)։ Երևույթը դիտարկվում է նաև մեր օրերում. «Ճատս սկսում էր իր պատմությունը ... Երբեմն նա իր պատմությունը խառնում էր անծանոթ ու տարօրինակ անուններ, երբեմն Դավիթի պատմությունը դառնում էր Քյոո Օղլու կամ ասենք ինչ-որ հին, տոհմական պատմություն» (Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ ա ն. 2014)։

Հարությունյան Շ. 2014, Լոշիկը: Իմ էջը. Կոտայք. – <https://www.17.am/loshik/> (մուտք՝ 29. IX. 2014):

Մանր ժամանակագրություններ. 1956, XIII–XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., XI + 685 էջ:

Մնձուրի Հ. 1986, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 544 էջ:

Չիթունի Տ. 1942, Սասունական: «Սասնանց տուն», «Սասնայ ծռեր» կամ «Սասունցի Ղալիթ» անուններով ծանօթ Հայ ժողովրդական դիցազնավեպին եօթը ճիւղին ամբողջական պատմութիւն, Փարիզ, տպ. Արաքս Թօփալեան, 1168 էջ:

Պետրոսյան Ս. 1986, «Սասնա ծռերի» Օղան-Տողանի ծագման շուրջ. – ՊԲՀ, № 3, էջ 195–200:

Ռամազյան Ս. 2018ա, Վաճառականի կերպարը «Քյոռօղլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 205–219:

Ռամազյան Ս. 2018բ, «Քյոռօղլի» էպոսի պատմականության ուսումնասիրության հարցերը և XVII դարի հայ պատմագրությունը. – «Արևելագիտության հարցեր» (Երևան), № 14, էջ 56–94:

Ռամազյան Ս. 2022, Նորահայտ հայկական կերպարներ «Քյոռօղլի» էպոսի թուրքական տարբերակներում. – «Արևելագիտության հարցեր», № 22, էջ 110–116:

Ռամազյան Ս. 2023, Քաջալ Համգա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում. – «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ», № 5, էջ 150–171:

Սասնայ ծռեր. 1892: Սասունցի Ղալիթ: Ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով): Ժողովրդագրական նիւթեր, գիրք Ա: Գրի առաւ Գարեգին Սարկաւազ (Յովսէփեանց), Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 151 էջ:

Սասնա ծռեր. 1936, հ. Ա, խմբ.՝ Մ. Աբեղյան, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետհրատ, 1128 էջ:

Սասնա ծռեր. 1944, հ. Բ, Ա մաս, խմբ.՝ Մ. Աբեղյան, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետհրատ, 405 էջ:

Սասնա ծռեր. 1951, հ. Բ, Բ մաս, խմբ.՝ Մ. Աբեղյան, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետհրատ, 1006 էջ:

Սասնա ծռեր. 1977, Ժողովրդական վեպ, աշխատ.՝ Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող», 698 էջ:

Սասնա ծռեր. 1999, հ. Դ, Նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 582 էջ:

Սասունցի Ղալիթ (համահավաք բնագիր). 1993, հյուսեց և խմբագրեց Գ. Գրիգորյանը, աշխատ.՝ Ա. Շահսուվարյանի և Ա. Բուդաղյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 416 էջ:

Սիրաս Հ. 1974, Հայրենի աշխարհ (վեպ), Երևան, «Հայաստան», 614 էջ:

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. 1961, հ. Ա, կազմ.՝ Ա. Սաֆրաստյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 404 էջ:

Քյոռ-Օղլի. 1941, Ժողովրդական վիպասանություն, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյան, առաջաբանը՝ Խ. Սամուելյանի, Երևան, ԱրմՖԱՆ, 235 էջ:

Boratav P. N. 2016, Köroğlu Destanı. Bütün Eserleri - 6, Ankara, BilgeSu, 358 s.

Kaya D. 2016, Köroğlu ve Tokat-Çamlıbel. Sivas, Çamlıbel Belediyesi Kültür Hizmetidir, 111 s.

АЛЛОГЕНИЧНЫЙ ПЕРСОНАЖ В СКАЗАНИЯХ ЭПОСА «САСНА ЦРЕР» И ЕГО ГЕНЕАЛОГИЧЕСКИЕ КОРНИ: ЗЫНДЖИЛ ГЫРАН

САМВЕЛ РАМАЗЯН

Р е з ю м е

Ключевые слова: эпос «Сасна црер» («Сасунские удалыцы»), Зынджил Гыран, Давид Сасунский, эпос «Кёроглы», Зинджиркыран, Аракел Даврижеци, Еремия Кёмурчян, Гарегин Овсепян.

Носители армянских и тюркских эпических традиций в Армянском нагорье находились в постоянном контакте, в результате чего выявляются аллогеничные (тюркские) персонажи в армянском эпосе «Сасна црер» («Сасунские удалыцы») и армянские персонажи, в частности, в эпосе «Кёроглы». Очевидно, что шел процесс двустороннего взаимообогащения и взаимопроникновения некоторых эпических элементов.

Анализ персонажей Зынджил Гыран в сказаниях эпоса «Сасна црер» и Зинджиркыран в эпосе «Кёроглы» дает возможность выявить их генеалогические корни. При этом, в сказаниях армянского эпоса Зынджил Гыран в основном фигурирует из круга соратников-сородичей сасунских храбрецов («безумцев»), а в эпосе «Кёроглы» он является соратником главного героя, членом группы безумцев-храбрецов («дели»). В обоих случаях данный персонаж имеет довольно ограниченное распространение: он более известен из некоторых сказаний «Сасна црер» и из версий «Кёроглы» («Кёроглу»), записанных в азиатской части Турции. Несмотря на это, в обоих случаях данный персонаж иногда включался в сводные варианты и переработки.

В османской и армянской историографии сохранились свидетельства о Зинджиркыране Али-паше, одном из предводителей джелалийских восстаний, историческом прототипе эпического персонажа.

Очевидно, что в случае персонажа Зынджил Гырана присутствует характерная для сказаний «Сасна црер» аберрация-отклонение, путаница. Персонаж не является характерным для армянского эпоса в целом и был заимствован из эпоса «Кёроглы». Процесс, который действительно характерен для фольклора.

Самвел Рамазян – к. филол. н., научный сотрудник отдела фольклористики Института археологии и этнографии НАН РА, преподаватель факультета востоковедения ЕГУ. Научные интересы: армяно-тюркские фольклорные сношения, история армяно-греческих отношений. Автор 1 монографии и около 40 статей. ORCID:0009-0007-1782-4777. sramaz@mail.com

AN ALLOGENIC PERSONAGE IN THE VERSIONS OF THE
EPIC “SASNA TSRER” AND ITS GENEALOGICAL ROOTS:
ZINJIL GHIRAN

SAMVEL RAMAZYAN

S u m m a r y

Keywords: epic “Sasna Tsrer” (“Daredevils of Sassoun”), Zinjil Ghiran, David of Sassoun, epic “Kerogli”, Zincirkiran, Arakel Davrizhetsi, Eremia Komurjian, Garegin Hovsepien.

The bearers of the Armenian and Turkic epic traditions in the Armenian Highlands were in constant contact, as a result of which allogeneic (Turkic) personages in the Armenian epic “Sasna Tsrer” (“Daredevils of Sassoun”) and Armenian personages, in particular, in the epic “Kerogli” are revealed. Obviously, there was a process of bilateral mutual enrichment and interpenetration of some epic elements.

The analysis of the characters of Zinjil Ghiran in some versions of “Sasna Tsrer” and Zincirkiran in the epic “Keroglu” brings to light their genealogical roots. At the same time, in the folk tales of the Armenian epic, Zinjil Ghiran mainly appears from the circle of comrades-in-arms of the Sassoun braves (“madmen”), and in the epic “Keroglu”, he is a companion of the main hero, a member of a group of brave madmen (“deli”). In both cases, this personage is not widely known: he is better known from some tales of “Sasna Tsrer” and from the “Keroglu” versions recorded in the Asian part of Turkey. Despite this, in both cases this personage was sometimes included in compilation versions and revisions.

The Ottoman and Armenian historiography preserved evidence of Zinjirkyran Ali Pasha, one of the leaders of the Jelali Revolts, the historical prototype of the epic character.

Obviously, in the case of the personage of Zinjil Ghiran, there is an aberration-deviation, confusion, typical for the versions of “Sasna Tsrer”. The personage is not typical for the Armenian epic in general and was borrowed from the epic “Keroglu”; a development that is truly characteristic of folklore.

*Samvel Ramazyan – Candidate of Philological Sciences, Researcher at the Department of Folklore Studies of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Lecturer at the Faculty of Oriental Studies of the YSU. Scientific interests: Armenian-Turkic folklore relations, history of the Armenian-Hellenic relations. Author of 1 monograph and about 40 articles.
ORCID:0009-0007-1782-4777. sramaz@mail.com*